

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՄԵՌՈՒՄ ՆԻԻԹԵՐԻՑ ԿԵՆԴԱՆԻ ԳՈՅԱՑՆԵԼՈՒ ՓՈՐՁ.
Ամերիկայից «Nev. Iork. Her.» Փարիզի հրատարակութեան
հեռագրում են, որ այնտեղ Ալեքսանդրիայի (Ինդիանաի շտատ)
պրոֆ. Լիտլտոնը մի խիստ հետաքրքրական զիւտ է արել, Բա-
նը վերաբերում է նորան, թէ ինչպէս կարելի է մեռած նիւ-
թերից կենդանի արարած գոյացնել.

Յայտնի է, որ ինքնաբերաբար սերուելու վարդապետու-
թիւնը (гетерогенезисъ) յաղթուեց հակադիր ուսմամբ, պանս-
պէրմիստով, որի շնորհիւ կենդանին կարող է առաջ գալ միայն
կենդանուց (omne vivumex ovo):

Գիտութեան պատմութեան մէջ նշանաւոր վեճը Պուլշէի
Պաստէօրի հետ, վերջացաւ վերջինս յաղթութեամբ.

Իսկ նորագոյն Աագնէր՝ Լիտլտոնին, եթէ հաւատանք
յիշեալ լրագրին, յաջողել է մի փորձ կատարել, որ հաստատում
է գէտէրօգէնէլիսի վարդապետութիւնը.

Ամերիկացի գիտնականը այսպէս է արել.—նա մի անոթի
մէջ լուծել է մի ունց կերակրի աղը 6 ունց թորած ջրի և 6
ունց 90 աստիճանի սպիրտի մէջ. Դորա կողքին ափսէների վե-
րայ ածել է 2 ունց անուշադր. Այս բոլորը ծածկել է ապակե
խուփով. $1\frac{1}{2}$ ժամից յետոյ վերցնելով այդ խառնուրդից և
ենթարկելով մանրադիտական զննութեան՝ երևացել է, որ հե-
ղուկ նիւթի մէջ վիտում են բիւրաւոր կենդանացած մարմ-
նիկներ. Այս մարմնիկները երեք երեք շօշափուկներ էին ար-
ձակել, որոնցով կերակուր էին որոնում իրանց արտադրող մի-
ջավայրում. Առ այժմ այսքանն է յայտնի այս նոր գիւտի մասին.

ՍԻՖԻԼԻՍԻ ՊԼՏՈՒԱՍ. Էդվիլ է կոչոււմ այն կապիկը,
որին Մեշնիկովն ու Ռուշ յաջողեցան պատուաստել սիֆիլիսը.
«Matin»-ի աշխատակիցը յօտերս այցելել է պրոֆ. Մեշնիկովին
Պաստերեան ինստիտուտը և տես է այն կապիկը, որ իւր

անկումով մարդկութիւնը պիտի ազատէ զարհուրելի հիւանդութիւնից:

— Կամբերութիւն ունեցէք, ասաց հոչակաւոր գիտնականը աշխատակցին, — 40—45 օր կանցնի, մինչև որ ռավարիայի նշանները կկրկնուեն: Իսկ այս ժամանակամիջոցում հիւանդութեան ընթացքում բարելաւութիւն պիտի նկատուի:

— Էդմիջը տանջւո՞ւմ է:

— Ոչ մի ծանր տանջանք չունի, և նորա ընութիւնը չէ փոխուել: Ճշմարիտ է, փոքր ինչ մեղմադձոտ է դառել, բայց այս տրամադրութիւնը յատուկ է այն բոլոր վայրենի գազաններին, որոնք ազատութիւնը կորցնում են:

— Կարծու՞մ էք, որ հակասիֆիլիսային թղոյնի գիւտն անելու վերայ էք:

— Ոչ, պղպէս արագ չենք քայլում, — համեստութեամբ նկատեց գիտնականը: Բայց երբ մարդու հետ գործ կունենանք, յոյս ունինք որ կգտնենք սիֆիլիսի հետ կռուելու միջոցը (Тифл. Л.)

ԹՈՒՔԱՆՏԻ ՆՈՐ ԴԵՂ. Թորային գնդկախոր բժշկելու ղեղերի թիւը մէկով էլ աւելացաւ: Պրօֆ. Ջոմէրֆէլդը և դր. Դանէլիուսը առաջարկում են այս նպատակով մի նոր խառնուած — սանօզին (sanosin), որ չաղկացած է՝ աւստրալիական *Eucalyptus citriodora maculata*-ի տերեւներից ու իւղից, ձծրմբածաղկից և փայտածխից պատրաստած փոշուց և գործ է դրւում ներշնչման համար: Սորա համար փակում են լուսամուտներն ու դռները, իսկ ապակէ խողովակում գտնուած փոշին շաղ են տալիս կաւէ թիթեղի վերայ, որ տաքանում է սպիրտի լամպիկով: պղ միջոցին եթերեայ էյկալիպտեան իւղից և ձծրմային թթուութեանց զազեր են դուրս գալիս: որոնք հետզհետէ լցնում են սենեակը և հիւանդը ներշնչում է: Առաջին անգամուայ համար դազ գոյանալը (տաքացնելը) 15 րոպէից աւելի չպիտի տևէ, իսկ յետոյ պէտք է դարձնել 20 կամ 30 րոպէ, նայելով սենեակի մեծութեան: Արիւն թքելը պէտք է ծառայէ իբրև հակացոյց ներշնչման գործածութեան, որովհետև սկզբում հազի գրգիռը մի քա ժամանակ զօրեղանում է: Սանօզին ներշնչելու աղղեցութիւնը ամենից առաջ արտայայտւում է հազի լաւանալով, խորիւր պակասելով և մաքրուելով: արդէն առաջին ներշնչումներից յետոյ հազի գրգիռը, որ այնքան ծանր է հիւանդների համար, նկատելի կերպով պակասում

է և մեծ մասամբ աստիճանաբար գրեթէ կամ բոլորովին անցնում է, Խորեք հեշտութեամբ է դուրս գալիս, բիւ բիւ կորցնում է թարախային յատկութիւնը և խիստ քջանում, Հիւանդների բունը, հազի բացակայութիւնից զգալի կերպով լաւանուր է, այնպէս որ նոյն իսկ ծանր դէպքերում կարելի է առանց բնաբեր գեղերի և մօրֆիտի բնել, Այս դեղի ազդեցութիւնը սուր կերպով արտայայտուում է և հիւանդների դուրս գնալու, ուտելու ինքնազգացութեան վերայ, յիշեալ բժշկների գրեթէ բոլոր հիւանդների կշիռը աւելացել է բժշկութեան ժամանակ, առանց սննդի եղանակը փոփոխելու, Ինչ վերաբերում է սանօզիին ազդեցութեան թորերի տեղական երեւոյթների վերայ, թէպէտ մեծ մասամբ դա շատ բարեյաջող է եղել, այնուամենայնիւ չէ յաջողել տեղական երեւոյթները բոլորովին հեռացնել, ապա ուրեմն սանօզիներ չի կարելի առանձնայատուկ միջոց համարել, Հեղինակները նկատում են նոյնպէս, որ այդ միջոցը բարեբեր ներգործութիւն ունի և թորախտների զիշերուայ բրտնքի վերայ, մի քանի դիպուածներում առատահոս բրտնքը, որ ուրիշ միջոցներով չէ անցել, հեղինակները յաջողել են դորանով բոլորովին ոչնչացնել (Рyce. Вp.):

ԻՔՍ ՃԱՌԱԳԱՅԹՅՆՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԶԵՑՈՒԹԻՒՆԸ, Խլիրդի բաղիարուժութիւնը իբւ ճառագայթների բժշկական գործունէութիւնից ամենահետաքրքրական և կարեւորն է, Բէօնտգէօնեան ճառագայթները կարող են օգուտ բերել ուրիշ հիւանդութիւնների դէմ կռուելիս: Դորանից կարելի է մատնանիշ անել պիսակի վերայ, որ ինչպէս յայտնի է կաշուի գնդկախտային մի հիւանդութիւն է, Դր. Սընգըէն և Սէդէրճօլմ (Ստոկհոլմ) բժշկների տեղեկութիւնների վերայ հիմնուելով (մօտ 30 պիսակային հիւանդի վերայ կատարած), նոյնպէս և Ուիլեամսի և այլոց, Բեօնտգէնեան ճառագայթները բայքայում են պիսակային կծիկները և այսպիսով նպաստում պիսակութեան բժշկութեան (Lupus): Բայց նոքա այնքան ուժով չեն ներգործում, և իրանց գործունէութեամբ յետ են մնում Ֆինցէնի լուսային եղանակից, նոյն բժշկապետների վկայութեամբ բաղիարուժութիւնը բոլորովին յաջողում է ջրջրուկի կամ ցանի ժամանակ, որ շատ յաճախ խիստ յամառ բնաւորութիւն է ունենում և դժուար է ենթարկուում սովորական բժշկութեան, 11 տեղական հիւանդների վերայ կատարած փորձերը ցոյց տուին որ Բէօնտգէնեան ճառագայթներով հիւանդութիւնն անցնում է

բաւական արագ (կատարելապէս բժշկուելու համար հարկաւոր է 15 կարճատև գործողութիւն)։ Դր. Բէստին (Բօստօնում) զեղեցիկ հետեւանքներ է տուել բարիաբուժութիւնը, ի միջի այլոց, տրախօմայի վերաբերմամբ։ Այնուհետեւ, թէպէտ սակաւաթիւ, բայց փաստեր կան, որ բոլորովին յաջող կերպով բժշկուած է գլխի զոնչութիւնը (II&P IIIA), որ առաջ է գալիս առանձին պարազիտային սնկիկով և որ դժուար բուժելի է և խիստ վարակիչ։ Ի՞նչ ճառագայթները սպանում են այդ սնկիկները և այդպիսով բժշկում 10—15 անգամ գործադրելուց յետոյ։ Մի քանի բժիշկներ սկսեցին Բէստինգէնեան ճառագայթները գործածել նեոտրաթուրութեան, և յատկապէս դէմքի եռաճիւղ նեարդի թուլութիւնը բուժելու համար և դատելով մեր ունեցած տեղեկութիւններից՝ ստացել են խիստ լաւ, յուսալի հետեւանքներ (Moz.)։

ԿԱՆԱԲՐՕՒՆԸ ԽԼԻՐԻԻ ԴԵՂ։ Մի շարք փորձերից յետոյ Կրակովի համալսարանի պրօֆ. Ադամկէիչը եկաւ այն եզրակացութեան, որ խլիրդային կծիկից դուրս քաշած, հիւթը, միացած կարբոլի և լիմոնի հիւթի հետ, զարմանալի կերպով ազդում է վնասարեւ ուռոյցքների վրայ, որոնք խլիրդ են կոչւում, եթէ միայն սրակում են կաշուի տակ որոշ քանակութեամբ Պրօֆ. Ադամկէիչը իւր գիւտը անուանեց կանկրօին և զեկուցում ներկայացրեց բժշկական զանազան գիտնական ընկերութեանց, մանրամասն նկարագրելով այդ միջոցով խլիրդով հիւանդների բժշկուելը։

Սկզբում բժիշկները, որոնք պրօֆ. Ադամկէիչի այդ միջոցը զանազան փորձերի էին ներարկել, չընդունեցին նրա առողջարար լինելը։ Այդ առիթով վիճաբանութիւնը լինում էր մասամբ Կրակովում, մասամբ Վեննայում։ Ընդիմախօսները ցոյց էին տալիս, որ մի քանի դէպքում նրանք նկատում էին որ հիւանդներն աւելի վատանում են այդ դեղից և բոլորովին դատապարտեցին այդ նոր միջոցը։

Բայց պրօֆ. Ադամկէիչը չէր վհատում։ Մի քանի տարուայ շարունակ գիտողութիւններից և փորձերից յետոյ նա կատարելագործեց իր գտած միջոցը և քննութեան համար ուղարկեց Փարիզի Փարիզի Ս. Ղազարի հիւանդանոցի գլխաւոր բժիշկ Բենուը հետաքրքրուեց այդ միջոցով, մի քանի փորձերի ենթարկեց և զետեղեց Ֆրանսիական բժիշկների «La Presse Medicale» լրագրի մէջ մի երկար յօդուած։ Այդ յօդուածում բժիշկ Բենուը թուում է մօտ տասը դէպք խլիրդի (չեզուրի կրծքի և կոկորդի) որոնց վերայ գործադրել են բժիշկ Ադամկէիչի միջոցը և հիւանդները առողջացել են (Bary)։

ԲԱՊԻՆ ԷԱՌԻՆՔԻ ԴԵՂ։ Կօնիգսբերգի համալսարանում երկու բժիշկներ Պֆէյֆեր և Ֆրիդբերգը ընդհով փորձեր են կատարել հարինքի (Tux) մանրէների վերայ։ Մուլթ սենեակում փակուած՝ նոցա սպանուեցան, կամ գէթ նոցա բազմաշաւու գործողութիւնը դադարացնուեց րալիի ճառագայթների

աղդեցութեամբ 24 ժամ շարունակ Եւելի հեշտ սպանուում են խօլբեյի և սուտակի (карбункулы) մանրէները: Այսպիսով գիտութիւնը մի նշանաւոր գիտ անելու վերայ է: Դժուարագարար ռադիո շատ թանկ է. մի գրամը բժիշկների տաելով՝ 30,000 ֆր. արժէ:

ՏՐԱՌՈՒԹՅՈՒ ՔԺՇՎՈՒԹԻՒՆԸ. Անբարեյաջող առողջապահական պայմաններում ապրող գիւղական և բաղադրային աղքատ ազգաբնակչութեան մէջ տարածուած դանախան աչքացաւերից ամենազխեաւորը ներկայումս տրախոման է կամ պոսպէս կոչուած եգիպտական հիւանդութիւնը: Այդ հիւանդութիւնը շատ ժամանակ չէ որ հիւսիսային Աֆրիկայից մտել է Գալիլիայում Խովաթիայում և Աւստրո-Հունգարիայի մի քանի գաւառները և այժմ մեծ արագութեամբ տարածուում է մեր կողմերը, մանաւանդ ամառը: Ամենից աւելի նորան նպաստում է մեծ բանակութեամբ փոշու հետ գործ ունեցող աշխատանքները, օր. աղալը: Մինչև վերջին ժամանակներս այս հիւանդութիւնը բժշկելու համար գործ էր ածուում զլեւորապէս արջասպ: Բայց ոչ այս և ոչ ուրիշ միջոցներ կանոնաւոր կերպով չեն բուժում տրախոման: Դոքա հիւանդին մեծ տանջանքներ պատճառելով՝ բժշկութեան համար պահանջում են մի քանի ամիս և անգամ ամբողջ տարի, որ բանուոր մարդու համար գրեթէ անիրագործելի է: Սոցա փոխարէն այժմ գտնուած է նոր դեղ, որ տրախոման բժշկում է արագ, նոյն իսկ առանց բժշկի յաճախակի ներկայութեան և որ չէ տանջում հիւանդին: Դա կիտրոնաթթուական պղինձ է (կուպրոցիտրոլ), որ առաջինը գործ դրեց դոկտ. Ալաբ. Գերմանական ակնաբուժարանում հաստատուած է, որ տրախոմաի ամենահին տեսակները բժշկուում են սորանով: Կրայնայում, ուր տրախոման ճարակում է մի քանի տասնեակ տարիներ, կիտրոնաթթուական պղինձը, որ գործ է դրուում 1902 թ. սեպտեմբերից, կատարելապէս փրկել է ժողովրդին այդ դարհուրելի հիւանդութիւնից, որ այնտեղ սաստիկ պակասել է այժմ: (Мор.)

ՀԻՃՈՒՎ ՕՁԻ ԹՈՅՆԻ ԴԷՄ. Օձի թոյնի դէմ նախապաշտպանող շիճուկի խնդիրը վէճի առարկայ է դարձել մասնագէտների մէջ: Դր. Կալմէտը ապացուցեց, որ կօբրի թոյնի դէմ շիճուկը, թէպէտ և աւելի ներգործական է այս օձի թոյնի դէմ, ընդունակ է սակայն չէզոքացնելու և ուրիշ օձերի թոյները: Սորա հակառակ Մարտինը և վերջերս Տիգուլէլը Աւստրալիայում քննադատեցին այս հայեազքը: Քիչ առաջ կապ. Լամբը հաստատեց անկասկած կերպով, որ այս շիճուկները պէտք է նոյնպէս առանձնատուկ լինին, ինչպէս օր. դիֆտերիտի և կարկամութեան: Նա մի շարք փորձեր կատարեց և համոզուեց որ չէզոքացնող աղդեցութիւնը ձեռք է բերում զանազան տեսակ օձերի կծելու վերաբերմամբ միայն ամեն մէկ տեսակի համար առանձին շիճուկով: Սորանով էլ բացատրուում է անշուշտ այն, թէ չնայելով որ գտնուած է այն շիճուկը, որ յաջող

գերպով ներգործում է կօբրի կծելու դէմ, միայն Հնդկաստանում օձից մեռնողների քանակութիւնը 1901 թ. հասնում էր ահազին թուի—22,810 հոգու:

ԽՕԼԷԻԱՅԻ ԲԺՎՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՄԻՋՈՑ. Խօլէրան—հընդախորդ դեռ մինչև այժմ մեծ զոհեր է տանում ամեն տարի: Այն ինչ այս հիւանդութիւնը բժշկելու համար դեռ բոլոր ոյժով աշխատում են փսխելը կտրել և տալիս են մեծ քանակութեամբ ալքօօլ: Վերջերս՝ փսխուած զանգուածի վերայ ըսկսան նայել ինչպէս յօրինուածքի համար փրկարար մի ռէակցիայի վերայ: Այդ զանգուածի հետ հեռանում են հիւանդային մանրէները, յօրինուածքը ապատում նորանից և այնուհետև արագութեամբ ձեռք է բերում իւր կորցրած ոյժերը: Բժշկի դերը նորա մէջ է ուրեմն, որ յօրինուածքին օգնէ մանրէներին ընթացք տալ: Ես ահա դր. Խարիտոնովը, որ առիթ է ունեցել դիտել Մաննջուրիայի աւերիչ համաճարակը, սկսեց գործ դնել մագնանա-կալի աղի թոյլ լուծուածքը, որ ներս էր մոգնում ստամոքսը: Այս դեղը թթուացնում էր մանրէները և անվնաս էր դարձնում նոցա: Միևնոյն ժամանակ փսխումը չէր կտրուում, որի հետ դուրս էին զալիս մեծ քանակութեամբ մանրէներ: Ստացուած հետևանքները սպասածից՝ գերազանցեցին: Մահացութեան տոկոսը սաստիկ պակասեց և հիւանդները աւելի շուտ էին ազատուում ծանր հիւանդութիւնից (Մօ8):

ՀՈԳԵԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ: Բրիւսէյի դր. Դէմօօրը մի նշանաւոր գիւտ է արել: Նա հաստատում է, որ առողջ, բոլորովին բնական մարդը, եթէ նորան երկու րոյորովին հաւասար կշռով առարկաներ տանը, որոնց ծաւալի մէջ մեծ զանազանութիւն լինի, երբէք միանգամից չի որոշի, որ երկուսի կշիռը միատեսակ է, և փոքր ծաւալի առարկան միշտ նորան մի փոքր ծանր կ'թուայ:

Իսկ տկարամիտ մարդիկ, ապուշներն ու այլասեռուածները, ընդհակառակ, միշտ ճշտութեամբ որոշում են այս առարկաների միահաւասար կշիռը. ոմանք փոքր ինչ տատանուելուց յետոյ, միւսները՝ միանգամից: Եւ այս տատանումը միայն որոշում է նոցա սեպհական անբնականութեան աստիճանը:

Իւր այս փորձը դր. Դէմօօմը կատարեց 380 երեխաների վերայ, 6—15 տարեկան, որոնցից միայն 10-ը, անպայման տկարամիտներ, միանգամից որոշեցին, որ տուած երկու, զանազան չափի, բայց հաւասար ծանրութեան, շիշերի քաշը միևնոյն է: Մնացած բոլոր երեխաները տատանուեցին, և փոքր չափի շիշը աւելի ծանր թուաց նոցա:

Ներկայումս ֆրանսիական բժիշկներ այս միջոցը գործ են դնում և հասակաւոր հիւանդների վերայ՝ նոցա հոգեկան բնականութեան աստիճանը որոշելու համար, և չգր. Դէմօօրի նըշանը գրեթէ ամեն դէպքում բաւական ճիշտ ցուցումներ է տալիս: (Մօ8)

Օր. Նուարդ Աղաբեանց